

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԱՏԱԼԻՆՅԱՆ ԲՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ա. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

1937 թ. հունիսին Խորհրդային Միության դժբախտ դատարանի առաջ էին կանգնել երկրի պաշտպանության Ժողովի տեղակալ, մարշալ Մ. Տուխաչևսկին, բարձրագույն ներկայացուցիչներ Ի. Կորկը, Ի. Յակիրը, Ի. Ուբորևիչը և ուրիշներ, ոյունց մեղադրեցին ու դատապարտեցին «զինվորական-ֆաշիստական դավադրություն» կազմակերպելու մեջ: Ընդհանրապես, դժվար է ընկալվում բռնությունների տրամաբանությունը, երբ այն գնահատվում է տվյալ պետության իրական շահերի տեսանկյունից: Այդ իմաստով երկրորդ աշխարհամարտին նախորդող տարիներին ստալինյան բռնության մեքենայի ահավոր հարվածը բանակի հրամկազմին ոչ մի տրամաբանության չի ենթարկվում: Առավել ևս, որ այդ տարիների քաղաքական ղեկավարությունը, բնականաբար և Ի. Ստալինը, շատ լավ գիտակցում էր, ուներ հավաստի սրվյալներ, որ վաղ թե ուշ ԽՍՀՄ-ը ներքաշվելու է պատերազմական գործողությունների մեջ: Պատահական չէ, որ 1939 թ. տեղի ունեցած Համկ(բ)Կ XVIII համագումարում նշվել էր պատերազմի ծագման վտանգի ու երկրի պաշտպանության ամրապնդման անհրաժեշտության մասին¹:

Վերոհիշյալ դատավարությունը զուգահեռ և դրանից հետո սկսվեցին «դավադրությունների» բացահայտումները Մերձբալթյան, Անդրկովկասի, Կիևի, Լենինգրադի, Մոսկվայի և երկրի ուրիշ տարածքներում տեղակայված զինվորական շրջաններում:

Բռնադատվեց բրիգադի հրամանատարների և ավելի բարձաստիճան հրամանատարների ու քաղաշխատողների 45 տոկոսը: Ավելի քան 40 հազար մարդ որպես անբարեհույս «զտվեցին» բանակից²:

1938 թ. բռնադատվեցին քաղաքացիական կոմիսիաների հերոսներ Վ. Բլյուխերը, Հ. Բժշկյանցը (Գայը), մինչ այդ ինքնասպանություն գործեց Կարմիր Բանակի քաղվարչության պետ Յա. Գամառնիկը և այլն:

Հասկանալի է, որ բանակում սանձազերծված բռնարարքները երկրով մեկ ընթացող բռնությունների մասն էին կազմում: Բռնություններ, որոնց 1935—1940 թթ. զոհ է դարձել, ըստ պաշտոնական տվյալների, 1 մլն. 635 հազար մարդ: Նրանցից 688 հազարը գնդակահարվել են³, ԽՍՀՄ-ում 30-ական թթ. զինվորականների նկատմամբ կատարված բռնաճնշումների խնդրի գիտակ, Ռուսաստանի Զինվորական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պատմական գիտությունների դոկտոր Օ. Սուվենիրովը գտնում է, որ 1937—1939 թթ. ԽՍՀՄ Բանվորա-գյուղադիական Կարմիր Բանակի (ԲԳԿԲ) կադրային հրամկազմից ձերբակալվել է 8122 մարդ (առանց ռազմա-օդային ուժերի և պահեստայինների հաշվարկի): Ընդ որում, բրիգադի հրամկազմի մակարդակի սպաներից 1936—1941 թթ. գնդակահարվել է 339-ը, գրվիզիո-

¹ Տե՛ս «Военный энциклопедический словарь», М., 1983, էջ 347:

² Տե՛ս В. П. Дмитриенко и др., История Отечества, XX век. М., 1995, էջ 245:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 433:

նի՝ 216-ը, կորպուսի՝ 88-ը: Բացի այդ, նրանցից 63-ը մահացել է կալանա-վաճարում, 8-ը ինքնասպանություն է գործել, իսկ 85-ը ստացել է երկարա-ժամկետ բանտարկության պատիժներ⁴: ԽՍՀՄ քրեական օրենսգրքն առավել խիստ պատիժներ էր նախատեսում հանցագործությունների համար, և պատահական չէ, որ նրանց մեջ ավելի մեծ քանակ էին կազմում զնդակահարու-թյան դատապարտվածները⁵:

Անցան տարիներ, և հետո միայն անաչառ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տվյալ ժամանակաշրջանի «գործերի» ճնշող մեծամասնու-թյունը չի համապատասխանում իրականությանը, և դատապարտվածների մեծ մասը, շատ դեպքերում հետմահու, արդարացվեց:

Բնական է, որ ստալինյան բռնություններից զերծ շմնացին նաև Հայաստանում ծառայող զինվորականները: Այստեղ ևս «բացահայտվում» էին «ժողովրդի թշնամիները» ու կրում անօրինական պատիժներ: Այդ տարիներին հատկապես մեծ հարված հասցվեց Հայաստանում տեղակայված «Հայկական դիվիզիայի» հրամկազմին, որի հրամանատարը՝ Սարգսրապատի ճակատա-մարտի խիզախ հրամանատարներից մեկը, զնդապետ Հակոբ Աթոյանը ևս զոհ զնաց բռնություններին՝ տանջամահ արվելով ՆԳժԿ-ի բանտում:

Համեմատության համար նշենք, որ 30-ական թվականներին Հայաստա-նում, ըստ 22 ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվի Կարճված գործերի ֆոնդի մեր ուսում-նասիրությունների արդյունքի, բռնադատվել է մոտ 15 հազար մարդ: Նրան-ցից 255-ը զինվորականներ էին, որոնցից 54-ը՝ սպաներ:

Առայժմ կատարվել է 22 ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվի նախնական ուսումնա-սիրություն: Մանրակրկիտ, գործերը մեկ առ մեկ ուսումնասիրելու դեպքում կարող են լինել մասնակի ճշտումներ: Այնուամենայնիվ, ներկայացվող թվա-կան տվյալներն արդեն իսկ հնարավորություն են ընձեռում ընդհանուր պատ-կերացում կազմելու կատարվածի մասին:

Ներկայացնենք 1930—1938 թթ. Հայաստանում տեղակայված զինվորա-կանների նկատմամբ կիրառված բռնությունների աղյուսակն ըստ պատժաչա-փերի.

Տարեթիվը	Թափառ-զինվորա-կան		Սպա		3 տարի		5 տարի		10 տարի		Գնդակ-		Համակնտ-նամարդ		Ուձ	
	2	3	2	3	2	3	2	3	2	3	2	3	2	3	2	3
1930	18	1	7	—	—	—	1	—	—	—	4	1	—	—	—	—
1931	51	9	10	2	5	1	3	—	—	—	6	3	—	—	5	—
1932	18	—	4	—	—	—	—	—	—	—	2	—	—	—	3	1
1933	27	—	4	—	1	—	1	—	—	—	1	—	—	—	9	—
1934	5	—	2	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	1	—
1935	6	3	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	3
1936	3	2	—	1	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
1937	46	11	7	1	8	—	1	1	1	6	1	—	—	13	1	
1938	27	28	2	1	3	4	1	2	4	15	—	—	—	6	2	
	201	54	37	5	18	5	8	3	5	21	14	4	—	37	—	
Ընդհա-նուր-թիվը	255	—	42	—	23	—	12	—	26	—	18	—	—	43	—	

Այստեղ շենք ընդգրկել ՆԳժԿ համակարգում աշխատող սպաներին ու այլ ծառայողներին, քանի որ նրանց նկատմամբ անհրաժեշտ է ուսումնասիրու-թյան այլ մոտեցում:

⁴ Տե՛ս «Аргументы и факты», № 41, 1995.

⁵ Տե՛ս Հայկական ՍՍՏՔ քրեական օրենսգրք, Եր., 1951, էջ 30:

Ինչպես նկատելի է աղյուսակից, 1937—1938 թթ. գնդակահարվել է 26 զինվորական, որոնցից 21-ը սպա էր:

Բանակը բազմազգ էր և «անբարեհույսների» թվում հայերը կազմում էին 134 հոգի, որից 34-ը սպա էր, ուսաները՝ 65, որից 11-ը՝ սպա, ուկրաինացիները՝ 35, որից 2-ը՝ սպա և այլն:

Մեղադրանքներից ամենահաճախ կրկնվել է հակախորհրդային գործունեությունը՝ 74, հակահեղափոխական՝ 12, դաշնակցական՝ 7, տրոցկիստական՝ 2: Լրտեսություն մեջ մեղադրվել են 4-ը:

Ուշագրավ է նաև բռնությունների ենթարկվածների կրթական մակարդակը Այսպես, նրանցից բարձրագույն կրթություն ունեին 14-ը, զինվորական՝ 1-ը, սկզբնական՝ 74-ը, միջնակարգ՝ 41-ը, գրագետ էին 48-ը, կիսագրագետ՝ 47-ը:

Ավելորդ չէ հիշել, որ 1921 թ. Հայաստանի զինվորականներից աքսորվեցին և Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարներում արգելափակվեցին շուրջ 1400 սպա, որոնցից մի մասը հետագայում վերադարձավ: Ընդհանուր առմամբ նրանց մեջ էին 15 գեներալ և 25 գնդապետ⁶: 30-ական թթ. բռնությունները չրացրին այդ «բացը», և նրանցից հայրենիք ետ եկածներից շատերը կրկին դատապարտվեցին:

30-ական թթ. զինվորականների նկատմամբ կիրառված բռնությունների զոհ դարձան նաև Հայաստանից դուրս ծառայող հայազգի զինվորներ, մասնավորապես՝ առասպելական Հայկ Բժշկյանցը (Մոսկվայում), կորպուսի հրամանատար, գնդապետ Անդրեյ Մելիք-Շահնազարովը (Բելոռուսիայում), որը 1922—1931 թթ. ղեկավարել է նորաստեղծ Հայկական հրաձգային դիվիզիան⁷ և ուրիշներ:

30-ական թթ. Հայաստանի զինվորականության նկատմամբ կատարված բռնությունների հիմնական հարվածը ուղղվեց հանրապետության տարածքում տեղակայված 76-րդ Հայկական մոտոհրաձգային դիվիզիայի սպայակազմին: Այդ ռազմական ստորաբաժանման կազմավորումը տեղի է ունեցել 1922 թ. Հայաստանում գործող Հայկական համահավաք բրիգադի հիման վրա, որի հրամանատարն էր գնդապետ Արկադի Մելիք-Շահնազարովը: Նա գրեթե 10 տարի ղեկավարեց այդ դիվիզիան՝ պարզեցնելով Կարմիր Աստղի շքանշանով (Հայաստանի) «Հայկական ԽՍՀ Կարմիր Բանակի հաջող կազմակերպման համար»: Ինչպես արդեն հիշատակեցինք, հայ զորահրամանատարը հետագայում (1931 թ.) տեղափոխվեց Բելոռուսիայի զինվորական շրջան և նշանակվեց 16-րդ հրաձգային կորպուսի հրամանատար: 1937 թ. հունիսին Ա. Մելիք-Շահնազարովը ձերբակալվում է, ապա կեղծ մեղադրանքով («Կարմիր Բանակում զինվորական-տրոցկիստական դավադրության») մասնակից) գնդակահարվում: Իհարկե դա «պատահական» չէր, քանի որ Բելոռուսիայի զինվորական շրջանի հրամանատարն էր մարշալ Մ. Տուխաչևսկու հետ «բացահայտված» Ի. Ուբորևիչը, որը շատ բարձր էր գնահատում հայ զորավարի ռազմական հմտությունները:

1931 թ. Մելիք-Շահնազարովին Հայկական դիվիզիայի հրամանատարի պաշտոնում փոխարինում է գնդապետ Հակոբ Աթոյանը, որը ձերբակալվել է 1937 թ. օգոստոսի 9-ին:

Հասկանալի պատճառներով անհրաժեշտ է փոքր-ինչ մանրամասն ներկայացնել Սարդարապատի ճակատամարտի ակտիվ մասնակից (եղել է, այսպես կոչված, «Ծղզիների դասակի» հրամանատարը), Հայաստանի քաղաքացիական կռիվներում Կարմիր Բանակի հրամանատարներից մեկի, ժամանա-

⁶ Տե՛ս «Հայություն», նոյեմբեր 1992, մայիս 1994:

⁷ Մանրամասն տե՛ս «Республика Армения», 27 ноября, 1996:

կին առասպելական Գայի հատուկ գործասի քաղղեկ, Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան գերազանց ավարտած գնդապետ Հակոբ Աթոյանի հանդեպ բացված գործը, որը հիմնականում տալիս է այն բանալին, թե ինչ «մեղադրանքներ» էին բարդվում գինվորականներին, հատկապես նրա ղեկավարած դիվիզիայի հրամանատարներին դժնի 37-ին՝

Նախ՝ հարկ է ուշադրություն դարձնել այն ողբերգական իրողությունները, որ բանտում Շ. Աթոյանը ենթարկվել է անմարդկային կտտանքների: Այսպես, 1955 թ. Անդրկովկասի գինվորական օկրուդի դատախազության լրացուցիչ հետաքննության եզրակացության մեջ կարդում ենք, որ հայ անվանի գորահրամանատարը ենթարկվել է ծեծի, խոշտանգումների և ծաղրուծանակի: «Բազմաթիվ վկաներ (ՆԳԺԿ-ի նախկին աշխատակիցներ Ն. Պետրոսյան, Մ. Մանուկյան, Ա. Մնացականյան և նախկին բանտարկյալներ Ա. Իոնեսյան, Մ. Սաղաթելյան, Ա. Գուլգարով և ուր.) հաստատում են, որ 1937 թվականի հոկտեմբերի 7-ին Աթոյանը բանտային հիվանդանոց է տարվել կիսակենդան վիճակում»:

Մինչև այդ նրա վիճակն այնքան վատ է եղել, որ չի կարողացել ինքնուրույն հագնվել: Եվ պատահական չէ, որ հիվանդանոց տանելու հաջորդ օրը Աթոյանը վախճանվում է¹⁰: Չնայած այն հանգամանքին, որ Շ. Աթոյանը բանտում էր 1937 թ. օգոստոսի 31-ից հոկտեմբերի 7-ը, գործում կա նրա հարցաքննության միայն մեկ արձանագրություն: Ընդ որում, սեպտեմբերի 30-ով թվագրված այդ արձանագրությունը մեքենագրված է, սակայն գործին է կցված ոչ առաջին օրինակը և հարցաքննողներից ոչ մեկի ստորագրությունը չկա փաստաթղթում: Այս մանրամասների շարադրանքն անհրաժեշտ ենք համարում, որպեսզի հստակ լինի, թե հիմնականում ինչ պայմաններում և ինչ միջոցներով էին կորզվում այդ տարիների «խոստովանությունները»: Կարծում ենք, որ այդ առումով կարևորվում է ոչ թե այն, թե կոնկրետ ինչ «ինքնախոստովանքներ» էին կատարում ձերբակալվածները, այլ այն, թե ինչ «մեղադրանքներ» էին բարդվում, որպես կանոն, անմեղ մարդկանց վրա, ոչ թե այն, թե ում անուններն էին «տալիս» տարբեր միջոցներով ահաբեկման ենթարկված, ըստ էության օրինականորեն պաշտպանվելու ոչ մի հնարավորություն չունեցող բանտարկյալները, «վկաները» և ուրիշները, այլ այն, թե ում էին ուզում տեսնել «հակահեղափոխական, աջ տրոցկիստական, ալգայնամոլական, լրտեսական» գործակալություն կատարողների մեջ քննիչները, իսկ ավելի ճիշտ՝ երկրի քաղաքական ղեկավարները:

Ավելացնենք, որ Շ. Աթոյանի հարցաքննության հիշյալ միակ արձանագրության մեջ ամեն առանձին էջի վրա դրված է Շ. Աթոյանի ստորագրությունը, սակայն անզեն աչքով իսկ նկատելի է, որ դրանք էպպես տարբերվում են մեկը մյուսից: Դա ևս վերապահության առիթ է տալիս, որ դրանք գրվել են նրա կողմից, և, եթե անգամ դա այդպես է, ապա ինչպիսի ֆիզիկական ու հոգեկան անմարդկային պայմաններում են կատարվել դրանք:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ի՞նչ մեղադրանք էին բարդում Հայկական դիվիզիայի հրամանատար, ԽՍՀՄ պաշտպանության Ժողովում Վորոշիլովի ձեռքով Կրեմլում ԽՍՀՄ մարտական «Կարմիր աստղի» շքանշան ստացած Շ. Աթոյանին:

⁸ ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվ 49Ֆ, գ. 2536: Շ. Աթոյանի մասին տե՛ս նաև «Լենինյան ուղիով», 1982, հ. 10, «Ավանգարդ», 14 հունիսի, 1985 թ. և ՀՍՀ, հ. 1, Հայ Ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, էջ 152, 373, «Հայք», 16 դեկտեմբեր, 1995 թ.:

⁹ Տե՛ս «Հայություն», փետրվար, 1994 թ.:

¹⁰ Տե՛ս ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվ, 49Ֆ, գ. 2536, թ. 41:

Այսպես, 1937 թ. օգոստոսի 29-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ում կազմված տեղեկանքում նշվում է, որ նա թաքցրել է իր ակտիվ գործունեությունը հակահեղափոխական դաշնակցականների մոտ ծառայելիս, հովանավորել է նախկին դաշնակցական սպաներին, թույլ է տրվել դիվիզիայի «կեղտոտումը դաշնակցական ազգայնական տարրերով, կապեր է ունեցել դավաճան Խանջյանի և Դիվիզիայի նախկին պետ, ձերբակալված Աբրահամյանի հետ: Դիվիզիայի ղեկավարման գործնական աշխատանքներում անց է կացրել հակահեղափոխական ազգայնական գիծ, միջոցներ չի ձեռնարկել դիվիզիայում բացահայտ վնասարարական փաստերի դեմ, զբաղվել է աչքակապություն, կուսակցությունն ու կառավարությունը խաբելով»:

Եվ պատահական չէ, որ այս ամենից հետո արդեն հայտնի պայմաններում Հ. Աթոյանը «խոստովանել է», որ ինքը մինչև իր ձերբակալման օրը եղել է «76-րդ Հայկական դիվիզիայում գոյություն ունեցող տրոցկիստական-ազգայնամոլական կազմակերպության մասնակից» և նշել այդ կազմակերպության 15 անդամների անունները՝ դիվիզիայի պետի տեղակալ Խորեն Աբրահամյան, 2-րդ գնդի քաղղեկ Համո Տեր-Դավթյան, հրետանային գնդի քաղղեկ Իվան Վարդանով, 3-րդ գնդի քաղբյուրոյի պատասխանատու Շամիր Հովսեփյան, 3-րդ գնդի քաղղեկ Սամվել Ասոյան, Դիվիզիայի դատախազ Օնիկ Վարդանյան, Զինվորական տրիբունալի նախագահ Շիրինյան, կարմիր բանակային Սեդրակ Կազրամանյան և ուրիշներ:

Ուշագրավ է նաև հարցաքննության այն հատվածը, որտեղ նկարագրվում է, թե իբր ինչպես է նրան «հավաքագրել» Հայաստանում գործող ազգայնական կազմակերպության ղեկավար Ա. Խանջյանը, որի նպատակն էր հանրապետությունը դուրս բերել ԽՍՀՄ-ի կազմից և դարձնել «խոշոր կապիտալիստական պետություն» կամ «ԽՍՀՄ հեղաշրջված կառավարության պրոտեկտորատ» և այլն:

Հ. Աթոյանը 1955 թ. ապրիլին արդարացվում է գործողություններում հանցանք չլինելու պատճառով:

Ընդհանրապես, 1930-ականներին բռնադատված Հայաստանի զինվորականության հիմնական մեղադրանքներն էին հակախորհրդային, հակահեղափոխական գործունեությունը, նախկինում դաշնակցական (երբեմն նշվում է նաև ցարական) բանակում ծառայելը, «աջ-տրոցկիստական, ազգայնական կազմակերպության անդամ լինելը, ազգայնամոլական, վնասարար» գործունեությունը, դաշնակցական բանակի սպաներին հովանավորելը և այլն: Մի քանիսին տրվում է նաև լրտեսության մեղադրանք:

Այդ առումով բռնադատված զինվորականների գործերում առանձնանում է մի գործ, որով մեղադրվում են 8 սպաներ՝ Հոդժոդկոմատի համակարգի զինղեկ, Դրոյի նախկին համհարգ կապիտան Աղասի Վարոսյանը, Սարգարապատի հերոսներից մեկը՝ գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկովը, Առողջապահության համակարգի զինղեկ, գնդապետ Խրիստոֆոր Արարատովը, Թբիլիսիում ռադմագիտության դասախոս Հակոբ Մկրտչյանը, ոչ մի տեղ չաշխատող, նախկին շտաբս-կապիտան Ծղիշե Կարապետյանը, Լուսժողկոմատի համակարգի զինվորական տեսուչ, փոխգնդապետ Դմիտրի Միրիմանովը, զինղեկ, կապիտան Ստեփան Հովհաննիսյանը, պետբանկի տեսուչ, դաշնակցական բանակի նախկին սպա Հարություն Տեր-Հակոբյանը¹¹:

Նրանց մեղադրական եզրակացության մեջ կարդում ենք, որ «դաշնակցական փետրվարյան արկածախնդրության» ճնշումից հետո 1922 թ. Լենինականում (Գյումրի) դաշնակցական տարրերի կողմից հիմնվում է հակահեղա-

¹¹ Տե՛ս նույն տեղը, գ. 9062:

փոխական, ապստամբական գաղտնի կազմակերպություն, որի նպատակն էր զինված ապստամբություն մտապայել Խորհրդային իշխանությունը, անջատել Հայաստանը ԽՍՀՄ-ից և վերականգնել դաշնակցականների իշխանությունը: Կազմակերպության մեջ ներգրավված էին ցարական, սպիտակ և դաշնակցական բանակների նախկին սպաները, ազգայնամոլները և հակահեղափոխական տարրերը, որոնց մի մասը ծառայում է ԲԳԿԲ-ում:

Կազմակերպության նախաձեռնողներն ու անմիջական ղեկավարներն էին Դաշնակցական կառավարության Զինվորական նախարարի նախկին օգնական Մովսես Սիլիկովը, նախկին դաշնակցական կապիտան, դաշնակցական խումբապետ Դրոյի համհարզ Աղասի Վարոսյանը, նախկին գնդապետ Ստեփան Ստեփանյանը (ձերբակալվել է այլ գործով):

Իր նպատակներն իրագործելու համար կազմակերպությունը պատրաստում էր ապստամբական կադրեր, կատարում էր կազմակերպության անդամների մոտ գտնվող զենքի հաշվառում և մշակում էր զինված ապստամբության ծրագիր:

Կողմնորոշվելով առանձին կապիտալիստական երկրների կողմը՝ ապստամբության ժամանակը կազմակերպությունը ծրագրում էր ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական երկրների հարձակման պահին: Նշվում է, որ այդ խումբը պարբերաբար հակահեղափոխական, պարտվողական քարոզ էր վարում և զբաղվում վնասարարություններով:

Ակնհայտ է մեղադրանքների կանխապես ուղղվածությունը, և այդ ժամանակների համար բնորոշ որ մեղադրանքներն էին հարուցված ցարական, դաշնակցական բանակի նախկին սպաներին:

Ինչպե՞ս կարող էր բուռն վերելք ապրող բռնությունների մեքենան «մոռանալ» Դրոյի համհարզին՝ Ա. Վարոսյանին, կամ դաշնակցական կառավարության Զինվորական նախարար Խ. Արարատովին և մյուսներին: Իսկ թե ինչքանով էին հիմնավորված մեղադրանքները, կարելի է եզրակացնել 1955 թվականի նրանց արդարացման մասին որոշումից, որտեղ նշվում էր, թե գործը կարճվում է առաջադրված մեղադրանքների անապացուցելի լինելու պատճառով:

Սակայն, ցավոք, այդ արդարացումն ուներ միայն բարոյական նշանակություն, քանի որ 1937 թ. նոյեմբերի 16-ի ՀԽՍՀ ՆԳԺԿ Եռյակի որոշմամբ նրանք բոլորը գնդակահարվել են:

Հայաստանի նախկին սպաների ճակատագրի արտահայտման բնորոշ օրինակ է վերը նշված գործով անցնող գեներալ-լեյտենանտ Մ. Սիլիկովի կյանքը: Ազնվական ծագում ունեցող, ցարական բանակի նախկին գեներալ-մայոր, Հայաստանի առաջին հանրապետության ղեկավար-լեյտենանտ Մ. Սիլիկովը այն 1400 սպաներից մեկն էր, որին 1921 թ. հունվարին աքսորեցին Ռյազան: Ինչպես նշված է նրա դեմ բացված մեկ այլ առանձին գործում, Մ. Սիլիկովը աքսորից վերադառնալուց հետո «սերտ կապեր էր պահպանում ցարական բանակի նախկին գեներալ Նազարբեկովի հետ (մահացել է): Հետագայում, ոչ մեկ անգամ, Նազարբեկովի հետ զրույցներում ծաղրում էր այն կադրային սպաներին, ովքեր ընդունել էին Խորհրդային դիժը՝ նրանց անվանելով դավաճաններ և սադրիչներ»¹²: Ապա, 1927 թ. Մ. Սիլիկովը կրկին ձերբակալվեց, սակայն հանցագործությունը չապացուցվեց: Նրան օգոստոսին ազատ արձակեցին, բայց ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ «Սիլիկովը մեծ հեղինակություն է վայելում դաշնակամետ անձանց շրջանում

¹² Տե՛ս նույն տեղը, գ. 9062, թ. 156:

¹³ Նույն տեղում, գ. 904, թ. 35:

և որ Հայաստանի ընդհատակյա դաշկազմակերպություններն ու «Գաշնակ-ցություն» կուսակցությունն ամբողջ ժամանակ հույս են տածում անհրաժեշտ ժամին օգտագործել Սիլիկոլին, որպես զինվորական մասնագետի՝ նրան առաջարկեցին կամավոր ընտրել իր բնակության վայրը ՌԽՖՍՀ-ի և ՈՒԽՍՀ-ի տարածքում»։ Մ. Սիլիկոլը ստիպված էր «կամավոր» բնակության վայր ընտրել Դոնի-Ռոստովը։ Նույն թվի հոկտեմբերին նրան համընդհանուր ներումով իրավունք է տրվում վերադառնալ Հայաստան, սակայն 1935 թ. նոյեմբերին նա կրկին ձերբակալվում է նմանատիպ մեղադրանքներով, որոնք Մ. Սիլիկոլը կտրականապես հերքում է, ուստի 1936 թ. ապրիլին հանցանքների ապացուցված չլինելու պատճառով՝ ազատ է արձակվում։ Ինչպես ակընհայտ է, բազմավաստակ զորականն անընդհատ հալածվում էր իշխանությունների կողմից և պատահական շէր, որ 1937 թվականին նորից ձերբակալվում է և գնդակահարվում։

Հայկական դիվիզիայի հրամկազմի հերթական զոհը դարձավ շտաբի պետ, գնդապետ Բագրատ Ավագյանը, որն առանձնանում է մյուսներից այն բանով, որ այդ անգամ ՆԳՏԿ մարմինները հանձին Բ. Ավագյանի «վնասագերծում են լեհական հետախուզությունների լրտեսի»¹⁴։ Այս անգամ Երևանում տեղի է ունենում ԽՍՀՄ Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի դատական շրջիկ նստաշրջան, որը 1938 թ. հուլիսի 19-ին «պարզում է», թե Բ. Ավագյանը «1929 թ. հավաքագրվել է մի օտարերկրյա պետության (ըստ գործի տվյալների՝ Լեհաստանի—Ա. Ս.) հետախուզությանը՝ այդ հետախուզության գործակալ Վ. Ի. Ժուկի կողմից...

1936 թ. Մոսկվայում Ավագյանը հավաքագրվել է ԲԳԿԲ հակախորհրդային զինվորական ֆաշիստական դավադրության մեջ, նրա ակտիվ մասնակցիցներից մեկի՝ Մելիք-Շահնազարովի կողմից, որի հանձնարարությամբ Հայաստանում Հրաձգային Դիվիզիայում անց էր կացնում ակտիվ վնասարարական աշխատանք...»։ Գնդապետը դատապարտվում է գնդակահարության։ Գտնելով, որ հարկ չկա մանրամասն վերլուծել այս մեղադրանքների անհիմն լինելը, որը հաստատվել է 1956 թ. նրա արդարացմամբ, ուշադրություն դարձնենք լոկ այն իրողությանը, որ իբր նրան հավաքագրող հիշատակված Վ. Ժուկն ընդամենը Ֆրունզեի անվան ԲԳԿԲ-ի ակադեմիայի գործավար-մեքենագրուհին էր, որի միակ «հանցանքն» այն էր, որ ազգությամբ լեհ էր։

Նույն դատարանի նախորդ օրվա նիստում 1938 թ. հուլիսի 18-ին գրեղակահարության է դատապարտվում «անգլիական հետախուզության գործակալ», 76-րդ Հայկական դիվիզիայի հրետանային գնդի շտաբի պետ, կապիտան Ստեփան Խաչատրյանը։ Նույն թվականի հոկտեմբերի 7-ին գործում գտնվող միակ հարցաքննության արձանագրության մեջ Ս. Խաչատրյանը սկզբում իրեն մեղավոր է ճանաչում միայն դիվիզիայի մի քանի ղեկավարների հետ կապ ունենալու մեջ, որոնք դաշնակցական նախկին սպաներ էին, և կրելով նրանց ազդեցությունը՝ թույլ է տվել հակախորհրդային, ազգայնամուլական արտահայտություններ։ Վերջում անսպասելիորեն հայտարարում է, որ իրեն երկու անգամ՝ 1935 և 1937 թթ. տարբեր մարդիկ հավաքագրել են անգլիական հետախուզության համար աշխատելու նպատակով¹⁵։ Արտաքուստ համոզիչ թվացող այդ «փաստերը» չեն դիմանում նույնիսկ թեթևակի քննական վերլուծությանը։ Հարց է առաջանում, թե ինչու՞ անգլիական հետախուզությունը մեկ անգամ նրան հավաքագրելուց հետո հանկարծ որոշում է երկրորդ անգամ հավաքագրել իր «գործակալին» կամ հավաքագրելուց հե-

¹⁴ Նույն տեղում, գ. 3169, թ. 126։

¹⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 2523, թ.թ. 8—16։

տո նրա հետ հերթական հանդիպումը նշանակում է 2 տարի անց և այլն, և այլն: Այստեղից բնական է 1956 թ. Ս. Խաչատրյանի արդարացումն իր գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով:

Նույն դիվիզիայի 227-րդ գնդի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Ավակիմյանը, որը ևս նախկինում ծառայել էր ցարական ու դաշնակցական բանակներում, մեղադրվում է որպես Հ. Աթոյանի կազմակերպած «հակախորհրդային, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական» խմբի անդամ և 1938 թ. մարտին ՀԽՍՀ ՆԿԺԿ Սոյակի կողմից դատապարտվում է գնդակահարության¹⁶:

Նմանատիպ մեղադրանքով 1937—1938 թթ. գնդակահարվում են Հայկական դիվիզիայի հրամանատարի պաշտոնակատար, մայոր Սամվել Ասոյանը, 226-րդ հրետանային գնդի ղինկոմ, գումարտակի քաղղեկ Անդրանիկ Ալեքսանյանը, նույն գնդի հրամանատար, գնդապետ Մկրտիչ Գևորգյանը, հրաձգային գնդի քաղղեկ Սեդրակ Կազրամանյանը, Հայկական դիվիզիայի քաղբաժնի ավագ հրահանգիչ Ռուբեն Խաչատրյանը և տարբեր հրամանատարական պաշտոններ վարողներ Խորեն Աբրահամյանը, Գարեգին Կուրյանյանը, Հրաչ Մուղնեցյանը, Օնիկ Տեր-Հովհաննիսյանը, Կորյուն Կալբուխյանը¹⁷: Տարբեր ժամկետներով ազատազրկվում են Վասիլի Վարդանյանը, Սուրեն Ստեփանյանը, Գուրգեն Աղաջանյանը, Գրիգոր Հարությունյանը, Վաղարշակ Ջանիբեկյանը, Անդրանիկ Հակոբյանը և ուրիշներ¹⁸:

Դրանից առանձնացնենք սահմանապահ զորքերի շտաբի պետ Վաղարշակ Ջանիբեկյանի գործը, որի մեղադրանքներն ինչ-որ չափով նման չէին ընդհանուրին: Այսպես, նրան մեղադրում են առևտրական նպատակներով հաճախ Իրանի սահմանապահների ներկայացուցիչներին խորհրդային տարածք մտնել թույլ սալու մեջ, նաև, որ նա «սերտ կապերի մեջ էր իրանական գործակալ Շահբախրակի ու Ազոլարովի հետ, որոնք կասկածվում են լրտեսության մեջ», բացի այդ, նա թույլ է տվել հակախորհրդային արտահայտություններ: Այդ մեղադրանքներով Վ. Ջանիբեկյանը ՀԽՍՀ Սոյակի որսչմամբ 1938 թ. հոկտեմբերին դատապարտվում է 10 տարի ազատազրկման, սակայն 3 ամիս անց գործը կարճվում է, և նա ազատ է արձակվում¹⁹:

Տրոցկիստական տրամադրությունների համար մեղադրված սպաններից միայն թիկունքային ծառայող Գրիգորի Հարությունյանի գործի տվյալների մեջ են հիշատակվում ինչ-ինչ փաստացի տվյալներ, որոնք կարող էին ապացույց դառնալ նման մեղադրանքների համար: Այսպես, նրա մեղադրական եզրակացություն մեջ հիշատակվում է, որ նա գինվորականների շրջանում պարբերաբար տարածում էր տրոցկիստական տրամադրություններ, զովաբանում հակահեղափոխական Տրոցկուն, սկսած 1927 թ. եղել է տրոցկիստական զաղտնի կազմակերպության անդամ, մասնակցել նրանց ընդհատակյա ժողովներին, պահում էր և տարածում հակախորհրդային, տրոցկիստական դրականություն, «13»-ի պլատֆորմը և այլն: Գ. Հարությունյանը 1938 թ. հուլիսին դատապարտվում է 10 տարի ազատազրկման և արդարացվում է 1959 թ. հանցակազմի բացակայության համար²⁰:

Այսպիսին էր Հայաստանում տեղակայված զորամասերում ծառայող

¹⁶ ՏԼ՝ս նույն տեղը, գ. 4160, թ. 130:

¹⁷ ՏԵ՝ս նույն տեղը, գ. գ. 4158, 7752, 4162, 4157, 3235, 4163, 4392, 4159, 2766, 8791:

¹⁸ ՏԵ՝ս նույն տեղը, գ. գ. 7722, 3758, 3227, 6658, 12659, 1499:

¹⁹ ՏԼ՝ս նույն տեղը, գ. 12659, թ.թ. 13—15:

²⁰ ՏԵ՝ս նույն տեղը, գ. 6658, թ.թ. 155—156:

Հայազգի սպանների նկատմամբ կիրառված ստալինյան բռնությունների պատկերը 1937—1938 թթ.: Ավելորդ շեմք համարում նշել նաև, որ մինչ այդ, 1931 թ. նոյեմբերին և 1935 թ. մարտին 5-ական տարի ազատազրկման էին ենթարկվել նաև դաշնակցական բանակի փոխգնդապետ Գաբրիել Տեր-Օհանովը և Զ-րդ տանկային գնդի աշտարակի հրամանատար, ենթասպա Դրաստամատ Քալաշյանը²¹:

Դաշնակցական հայտնի ղեկավարներ Դրոյի, Արսեն Շահմազյանի և Ռուբեն փաշայի հետ նախկինում մտերիմ հարաբերություններ ունեցող, գյուղատնտեսություն ինստիտուտի զինղեկ Տեր-Օհանովը մեղադրվում էր այն բանում, որ լինելով Երևանի հրամանատարական կուրսերի պետ՝ մտել է նախկին սպանների հակահեղափոխական խմբավորման մեջ և դարձել դրա ղեկավարներից մեկը, նախապատրաստել զինված ապստամբություն և այլն:

Իհարկե, հիշատակվում են նաև նրա «շարագործությունները» Զանգիբասարի թուրք բնակչության դեմ, որի համար ստացել է փոխգնդապետի կոչում և այլն:

Առավել տարօրինակ են հնչում մեր օրերում Դր. Քալաշյանին հարուցված մեղադրանքները, որոնցից հիմնականը վերջինիս ազգականների նախկինում հայտնի գործիչներ լինելն էր: Այսպես, մեղադրական եզրակացությունում գրված է, որ ՆԳՎ-ի հատուկ բաժին տվյալներ են ստացվել այն մասին, որ Դր. Քալաշյանը Հայաստանի դաշնակցական պառլամենտի նախկին անդամի տղա է, նրա մերձավորագույն ազգականներից մեկը եղել է ներքին գործերի նախարարը Այնուհետև, այն ժամանակների սովորական մեղադրանքներից է, որ նա զինվորների մեջ վարել է հակախորհրդային քարոզչություն՝ ապացուցելով, թե Խորհրդային իշխանության քաղաքականությունը ճիշտ չէ, աշխատավորների վիճակը վատանում է, կոլեկտիվացումը խեղդում է գյուղացիությունը և այլն:

Հայաստանում ժառանգող զինվորականությունը բնականաբար միատարր չէր, և հատկապես հրամկազմում քիչ թիվ չէին կազմում այլ աղբերի ներկայացուցիչները, մասնավորապես ռուսները, ուկրաինացիները, ինչպես նաև Հայաստանում բնակվող քրդերը, ասորիները և այլն: Նրանց մեղադրանքներում ևս գերիշխում է հակախորհրդային, տրոցկիստական գործունեությունը, սակայն մի քանիսը մեղադրվել են նաև լրտեսություն մեջ:

Մեր կարծիքով առանձնահատուկ վերաբերմունք է պահանջում 20-րդ հրաձգային դիվիզիայի 58-րդ գնդի մարտկոցի հրամանատար Վալերիան Կոզլովսկու գործը: Վ. Կոզլովսկին ձերբակալվել է 1937 թ. օգոստոսի 27-ին և մեղադրվել էր զինվորական-տրոցկիստական հեղաշրջում նախապատրաստող խմբի անդամ լինելու մեջ: Այնուհետև նշվում է, որ նա «եղել է լեհական հետախուզության գործակալ, լրտեսական աշխատանք է կատարել ԽՍՀՄ-ում»²²: Մասնավորապես հիշատակվում է, թե Վ. Կոզլովսկին խոստովանել է, որ 1926 թ. նրան հավաքագրել է լեհական հետախուզության գործակալ Ցիգրիևիչը՝ խոստանալով նյութական օգնություն: 1938 թ. հուլիսի 19-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի դատարանի շրջիկ նիստը լսել է Վ. Կոզլովսկու գործը և դատավճիռը չի փոխել:

Դիլիջանի զինվորական շինարարության պետի տեղակալ, ազդուությամբ օս, ցարական և սպիտակգվարդիական բանակների նախկին սպա Ահմեդ Ֆիդարովը ձերբակալվել է 1937 թ. օգոստոսին և մեղադրվել թուրքական հետախուզության գործակալ լինելու մեջ: Նրան իբր 1918 թ. հավաքագրել էին

²¹ Տե՛ս նույն տեղը, գ. գ. 4638, 10563,

²² Նույն տեղում, գ. 11329, թ.թ. 74—76,

Բաքու ներխուժած թուրք զավթիչները: Այդ ժամանակներում հասկանալի է, որ թուրքական լրտեսը պետք է վարեր նաև հակահեղափոխական քարոզչություն: Նա մասնավորապես «ասել» էր, «եթե մի երկու ամիս էլ չբացահայտվեր Տուխաչևսկու կենտրոնը, ապա տեղի կունենար հեղաշրջում, և մենք կազատվեինք այս կյանքից»²³:

1938 թ. մարտին շնՍՀ ՆԳԺԿ Եռյակը Ա. Ֆիդարովին դատապարտեց գընդակահարության: 1958 թ. վերանայվեց այդ որոշումը, և Ա. Ֆիդարովն արդարացվեց հարուցված մեղադրանքների անապացույց լինելու պատճառով:

1938 թ. գնդակահարված այլազգի սպաներից էր կապիտան Իվան Իևոն, որին մեղադրում են հակահեղափոխական-ահաբեկչական, դիվերսիոն-վնասարարական գործունեության մեջ: Նա ևս 1956 թ. արդարացվել է հանցակազմի բացակայության պատճառով:

Նման մեղադրանքներով 1930—1938 թթ. տարբեր ժամկետներով դատապարտվեցին լատիշ Վ. Էնգելը, քուրդ Ա. Շամոևը, ասորի Պ. Բարկարխան-Իվանովը, ինչպես նաև՝ Ա. Իվանովը, Ա. Դուրնիկը, Ս. Ելագինը, Ի. Իվանովը, Յ. Կադուլինը և Գ. Լոխմանովը և ուրիշներ²⁴:

1935 թ. մարտին ձերբակալվել և 2 տարի ազատազրկման է դատապարտվել կրտսեր հրամկազմի ներկայացուցիչ Ալեքսանդր Իվանովը, որը լինելով գնդի գրադարանավար՝ թույլ էր տվել «հակահեղափոխական արտահայտություններ», մասնավորապես փնտվել էր կուսակցության և կառավարության ղեկավարներին, քննադատել Տուխաչևսկու ելույթը ՀամԿ(Բ)Կ XVII համագումարում և այլն²⁵:

3-րդ Կովկասյան հրաձգային դիվիզիայի 8-րդ գնդի վաշտի հրամանատար Վ. Էնգելը փորձել էր արձակուրդն անցկացնել իր հայրենիքում՝ կատվիսյում, ինչը որակավորվել է դասալքության փորձ, կապեր է ունեցել հակախորհրդային անձնավորությունների հետ, հանցավոր անտարբերություն է ցուցաբերել վաշտի քաղաքական-քարոչական վիճակի նկատմամբ և 1931 թ. դատապարտվել է 5 տարի ազատազրկման²⁶:

1937 թ. սեպտեմբերին ձերբակալվում և 10 տարի ազատազրկման է դատապարտվում Լենինականի Կազաչի պոստում տեղակայված 58-րդ հեծելազորային գնդի դասակի պետ Ա. Շամոևը, որին մեղադրում են երկար տարիների ընթացքում զինվորականների մեջ հակահեղափոխական քարոզչություն վարելու համար, նա պնդել է, որ անհրաժեշտ է տապալել խորհրդային իշխանությունը, վարկաբեկել կուսակցության ղեկավարին և այլն²⁷:

Լենինականի սահմանապահ ջոկատի ուղեկալի պետի տեղակալ Ս. Ելագինը ձերբակալվեց 1937 թ. և մեղադրվեց զինվորականների շրջանում հակահեղափոխական-տրոցկիստական քարոզ վարելու և Ֆաշիզմը գովաբանելու մեջ և այլն, որի համար դատապարտվեց 8 տարի ազատազրկման²⁸:

Այդ ջոկատի քաղղեկ Ի. Իվանովի մեղադրանքում նույն ձևակերպումներն են, միայն մեկ վերապահումով, թե նա թաքցնում էր իր տրոցկիստական հայացքները, իսկ դատավճիռը 7 տարի ազատազրկումն էր²⁹:

Լենինականի սահմանապահ ջոկատի Ֆինմասի պետ ուկրաինացի Ի. Զումակը ևս մեղադրվում է տրոցկիստական քարոզչություն վարելու, բացա-

²³ Նույն տեղում, գ. 5353, թ. 31:

²⁴ Տե՛ս նույն տեղը, գ. գ. 12890, 10147, 228, 2860, 6063, 1837, 1850, 8164, 3226:

²⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 6063, թ. 54:

²⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 12890, թ. թ. 91—97:

²⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 10147, թ. 37:

²⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 1837, թ. 39:

²⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 1850, թ. 41—46:

Հայտնված «Ժողովրդի թշնամիներ» Տուխաշևսկուն և ուրիշներին գովաբանելու, խորհրդային մամուլի նկատմամբ թերահավատություն արտահայտելու մեջ: Քննությունն ընթացքում պարզվել է նաև, որ նա 1918 թ. կովել է ուկրաինական ազգայնամոլական գնդի շարքերում, իսկական անուն-ազգանունը՝ Վասիլի Ֆրանցի Կախանշուկ, փոխել է իվան Վասիլևիչ Չումակով և այդ անունով մնացել Ուկրաինայում, թաքցրել է իր կապը Լեհաստանում ապրող ազգականների հետ:

1938 թ. հունիսին Ի. Չումակը դատապարտվում է 5 տարի ազատազրկման⁸⁰,

Այսպիսով, 1930—1940 թթ. ԽՍՀՄ-ում, այդ թվում և Հայաստանի տարածքում տեղակայված զինվորական ստորաբաժանումներում կատարված ստալինյան բռնությունները լուրջ հարված հասցրին բանակի հրամկազմին: Երկրորդ աշխարհամարտի շեմին կանգնած պետությունը զղալիորեն թուլացրեց իր պաշտպանունակությունը և Հայրենական պատերազմի առաջին շրջանի զգալի կորուստները հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, դարձավ բանակի ոչ պատշաճ մարտունակությունը, փորձված հրամկազմի բացակայությունը: Պատահական չէր, որ պատերազմի ընթացքում Ի. Ստալինը հիշեց բարեբախտաբար շղնդակահարված մի շարք զորավարների, որոնք իրենց ակնառու ներդրումն ունեցան հաղթանակի դործում:

Ինչպես նկատելի է, այդ տարիներին զգալի կորուստներ կրեց նաև հայ զորականությունը, որի շատ անվանի կադրային սպաներ կոչվեցին ստալինյան բռնություններին:

Չնայած դրան, հայ զորավարները պանծալի անուններ տվեցին նաև երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ 4 մարշալ, բազմաթիվ գեներալներ, հարյուրից ավելի ԽՍՀՄ հերոսներ և այլն:

Պատմության մեջ ընդունված չէ եթեներով առաջնորդվել, սակայն մի պահ ենթադրենք, որ եթե չլինեին այդ դժնի տարիների անմեղ, անիմաստ զոհերը, ապա ինչքան կյանքեր կարող էին պահպանվել պատերազմի տարիներին: Պատմական այս դառը դասը չպետք է մոռանան երկրի քաղաքական առաջնորդները, քանի որ պատմությունը խստորեն պատժում է նրանց, ովքեր ճիշտ հետևություններ չեն անում նախորդ շրջանների սխալներից:

А. С. МАНУКЯН — Военнослужащие Армении в годы сталинских репрессий.—Сталинские репрессии в Армении осуществлялись также в отношении военнослужащих, многие из которых стали жертвами этих бесчеловечных деяний. В результате изучения материалов архива НБ МВД и НБ РА выяснено, что за 1930—1938 гг. были репрессированы 255 военнослужащих, из коих расстреляны 26 человек, на 10 лет лишения свободы осуждены 12 и т. д. Необходимо учесть также, что в 1921 г. была осуществлена массовая ссылка 1400 офицеров армянской Армии в Рязань.

Жертвами репрессий стали такие выдающиеся армянские полководцы, как легендарный Гай (Г. Бжишкян), генерал-лейтенант М. Силиков, командир корпуса полковник А. Мелик-Шахназаров, командир Армянской дивизии полковник А. Атоян, бывший министр обороны 1-ой Армянской республики полковник Х. Араратов и др.

⁸⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 1854, թ. թ. 23—48: